

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Ի թիվս այլևայլ երևույթների, լեզվի մեջ, բնականաբար, արտահայտություն են գտնում նաև հոգեկան երևույթները: Սակայն արտահայտության միջոցներն ու եղանակները միաբնույթ ու միատեսակ չեն, նրանք տարբեր լեզուներում հանդես են գալիս տարբեր ձևով և միևնույն լեզվի մեջ էլ բաշխվում տարբեր կերպ:

Այս հարցը քննելիս ամենից առաջ հարկավոր է տարբերակել, թե հոգեկան ի՛նչ երևույթների արտահայտության մասին է խոսքը՝ դրանց ընդհանուր-օբյեկտիվ՝ խոսողից անկախ արտահայտության, թե՞ խոսողի հոգեվիճակի, նրա վերաբերմունքի սուբյեկտիվ դասևորման մասին: Հասկանալի է, որ հոգեկան երևույթների օբյեկտիվ արտահայտությունը կատարվում է առաջին հերթին բառային համապատասխան միավորների միջոցով: Ամեն լեզվում էլ գոյություն ունեն առանձին բառեր և տերմիններ, որոնց օգնությամբ կարելի է արտահայտել ու նկարագրել այս կամ այն հոգեկան երևույթը: Այլ է հարցը, թե դրանք ինչպե՛ս են բաշխվում ըստ խոսքի մասերի և համանշային ու հականշային ի՛նչ խմբեր են կազմում, ինչքա՛ն են և ինչպե՛ս են բաշխվում, ի՛նչն է տվյալ լեզվի մեջ մղվում առաջին սլան: Հոգեկան երևույթների սուբյեկտիվ արտահայտությունը, ավելի ճիշտ՝ խոսողի հոգեկան աշխարհի և վերաբերմունքի արտահայտությունը կատարվում է ոչ միայն բառային (վերաբերականներ, ձայնարկություններ), այլև բառակազմական, քերականական, հնչական ու կետադրական, ինչպես նաև հարալեզվական (ժեստեր, միմիկա) ամենատարբեր միջոցներով:

Եթե մենք քննարկենք հաղորդակցման առանձին ակտերը, ապա դրանց համար դժվար չէ առանձնացնել բուն հաղորդումը կամ նշանակումը՝ հարաբերությունը դեպի օբյեկտը, և այսպես կոչված, նշանակչությունը (կոննոտացիան)՝ խոսողի հարաբերությունը դեպի հաղորդման առարկան ու խոսակիցը: Սակայն մենք կարող ենք վերանալ հաղորդակցման առանձին ակտերից և նկատի ունենալ, թե երկու դեպքում էլ, հոգեկան երևույթների ի՛նչ շրջանակ է ընդգրկվում լեզվում: Այլ կերպ ասած՝ կարող ենք ընդհանրացնել բոլոր հոգեկան երևույթները, որոնք լեզվի մեջ հանդես են գալիս տարբեր միջոցներով ու եղանակներով՝ և՛ որպես հաղորդման բովանդակություն, և՛ որպես հաղորդողի վերաբերմունք այդ բովանդակության նկատմամբ:

Հողվածի հեղինակի մշակած համընդհանուր լեզվաբանական կաղապարը (ՀԼԿ) հնարավորություն է տալիս լուծելու այս խնդիրը, որ, բնականաբար, ոչ թե հոգեբանական խնդիր է (թեև ունի նաև հոգեբանական նշանակություն), այլ լեզվաբանական: Ուշադրության կենտրոնում հոգեկան երևույթների լեզվական արտահայտությունն է, այդ երևույթների լեզվական կաղապարման (մոդելավորման) խնդիրը:

Համընդհանուր լեզվաբանական կաղապարի՝ մինչև սյծմ մեր տված նը-

կարագրությունների մեջ հոգեկան երևույթների նկարագրության խնդիրը շոշափված է հարևանցիորեն: Այստեղ առաջին անգամն է փորձ արվում որոշակիորեն լուծելու այդ խնդիրը, այսինքն՝ կիրառելու ՀԼԿ-ն հոգեկան երևույթների նկարագրության նկատմամբ: Նշենք, որ հեղինակը հիմնական զրծերով ավարտել է մի մենագրություն, որտեղ տրվում է ՀԼԿ-ի համեմատաբար ծավալուն շարադրանքը:

ՀԼԿ-ի ամենից ավելի ավարտուն պատկերը ներկայացված է «Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն» գրքում¹: ՀԼԿ-ի կարգերի (կատեգորիաների) և եզրերի՝ այդ զրքում արված նկարագրությունը հետագա մշակման և մասնակի փոփոխության է ենթարկվել: Մասնավորապես ուզում ենք նշել, որ՝ 1) հանվել է տեղողության կարգը, որ կարելի է դիտել որպես ժամանակի շափ, այսինքն՝ շափի և ժամանակի կարգերի զուգորդում, 2) համեմատության կարգը բերվել է նրա տեղը, որպես շափի գոյորոշ կարգի առգոյորոշ նմանակը (անալոգը), և 3) համեմատության կարգի թափուր տեղը լրացվել է համադասության կամ. օգտվելով Ի. Կանտի տերմինից, որակի կարգով², որ դիտվում է կազմի գոյություն կարգի առգոյությունը դրսևորումը. նրան վերագրվում են հետևյալ 6 եզրերը.

→ դրականություն

← միտականություն

→ հակադրականություն

← → փոխարկելիություն («արոհություն», «գիղջունկցիա»)

⇒ միավորում («կոնյունկցիա»)

○ առանձնականություն:

Մեր կողմից կազմված է ՀԼԿ կարգերի (կատեգորիաների) և եզրերի հայերեն, ռուսերեն և անգլերեն նշանակումների ցանկը, որ կօգտագործվի հետագա հետազոտությունների մեջ:

Այժմ անցնենք ՀԼԿ-ի հիման վրա հոգեկան երևույթների հիմնական խրմբերի՝ կարգերի (կատեգորիաների) ու սրանց եզրերի կամ, վերջին հաշվով, հոգեկան երևույթների լեզվաբանական կաղապարների բացահայտմանը: Կիրառել ՀԼԿ-ն հոգեկան երևույթների նկատմամբ նշանակում է բացահայտել ՀԼԿ-ի ընդհանուր կարգերի (կատեգորիաների) և սրանց եզրերի նշանային-հոգեկան նմանակները (անալոգները), ցույց տալ, թե ի՞նչ նշանային-հոգեկան կարգեր կան, և այդ կարգերը ի՞նչ եզրեր ունեն:

Հոգեկան երևույթների կարգային (կատեգորիական) դասակարգումը հենվում է երկու ընդհանուր կարգի (կատեգորիայի) վրա՝ կախում (սուորադասություն) և պատճառականություն, որոնցից առաջինը հատուկ է առարկաների նյութական վիճակներին, երկրորդը՝ այդ վիճակների հարաբերություններին՝ գործընթացներին: Կախումը պատկանում է, այսպես կոչված, գոյորոշ (սուբստանտիվ), պատճառականությունը՝ առգոյորոշ (ասրիբուտիվ) կարգերի խմբին: Առաջին դեպքում առարկաներն են առնվում իրար հետ ունեցած որոշակի հարաբերությունների՝ կախումների մեջ, երկրորդ դեպքում այս կախումներն են առնվում իրար հետ ունեցած կախումների մեջ. ենթադրվում է, որ կախումների կախումները ոչ այլ ինչ են, եթե ոչ պատճառական հարաբերություններ: Եթե առարկայական մի վիճակ կախման մեջ է գտնվում մի

¹ Գ. Բ. Զառուկյան, Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1980, էջ 14—19:

² Տե՛ս I. Kant, Kritik der reinen Vernunft, Wiesbaden, 1956: Կանտը, բնականաբար, տարբերում է որակի կարգի (կատեգորիայի) ընդամենը երեք եզր՝ հաստատում, միտում, անսահմանություն:

այլ վիճակից, ապա առաջին վիճակը հանդես է գալիս որպես պատճառ, երկրորդը՝ որպես հետևանք, այսինքն՝ նյութական կախման վիճակի բնութագրումից մենք սնցում ենք կատարում որոշակի դարձրնիթացի (պրոցեսի) բնութագրմանը: Պատճառականությունը, այսպիսով, ներկայացնում է կախման գործընթացային նմանակը (անալոգը):

Արդ՝ ի՞նչ ձևով է արտահայտվում կախման կարգը հոգեկան-նշանային ոլորտում: Եթե մենք հոգեկան երևույթները բնութագրենք որպես նշանային երևույթներ, այսինքն՝ «նշան» բառը գործածենք որպես առարկայի տեղակայող (փոխարինող) հոգեկան աշխարհում, ապա գծվար շի լինի հասկանալ, որ հնարավոր է նշանի (նշանների) երեք կարգի հարաբերություն՝ 1) նշանի կազմավորման աղբյուրի (առարկայի) և նշանի փոխհարաբերությունը (օբյեկտիվի սուբյեկտիվացում, արտաբին աշխարհից անցում նշանային կամ հոգեկան աշխարհի), 2) նշանների փոխհարաբերությունը կամ մի նշանի հարաբերությունը մյուսի հետ և 3) նշանի հարաբերությունը նրա արտահայտչի հետ (սուբյեկտիվի օբյեկտիվացում): Այլ կերպ ասած՝ նկատի է առնվում երեք կարգի հարաբերություն՝ 1) առարկա—նշան, 2) նշան—նշան և 3) նշան—արտահայտիչ: Առաջինը հանդես է գալիս որպես ընկալում կամ, մարդու նրկատմամբ մասնավորված, լիմպցություն (ճանաչողություն), երկրորդը՝ որպես ներաշխարհ կամ, մարդու նկատմամբ մասնավորված, գիտակցություն, երրորդը՝ որպես արտահայտություն կամ, մարդու նկատմամբ մասնավորված, լեզու: Այսպիսով, նկատի ունենալով հատկապես մարդկային հոգեկան աշխարհը՝ մենք կունենանք երեք կախումնային կարգ (կատեգորիա)՝ իմացություն, գիտակցություն և լեզու: «Հոգեկան աշխարհ» արտահայտությունը գործածելով ավելի լայն առումով, այսինքն՝ նկատի ունենալով հոգեկանի ամեն մի դրսևորում, մենք կունենանք ընկալում, ներաշխարհ և արտահայտություն, որոնց հիման վրա զարգանում են իմացությունը, գիտակցությունը և լեզուն:

Այս կարգերի (կատեգորիաների) առանձնացման ժամանակ երևույթները (նշանները) առնվում են անկախ գործընթացներից և անցումներից: Եթե մենք հաշվի ենք առնում պատճառական հարաբերությունները, համապատասխանաբար ունենում ենք երեք այլ կարգ (կատեգորիա)՝ ըստ 1) առարկա—նշան, 2) նշան—նշան և 3) նշան—արտահայտիչ հարաբերությունների. այս դեպքում մենք կունենանք եղանակավորության, մասժողովյան և հաղորդակցման կարգերը, որոնք հոգեկան ավելի պարզ ձևերում կհամապատասխանեն վարմունքի (որպես ստիմուլի և ռևակցիայի), նախամտածողության և նախահաղորդակցման դրսևորումները:

ՀԼԿ-ի նախորդ շարադրանքներում ասվել է, որ կարգերը (կատեգորիաները) ոչ այլ ինչ են, եթե ոչ բարձրագույն ընդհանրացումներ, որոնց ներսում առանձնացվում են որպես անբաժանելի տարր-բաղադրիչներ, այսպես կոչված, եզրերը (տերմերը): ՀԼԿ-ի համակարգում տարրերվում է վեց եզր (տերմ), այսինքն՝ երկանդամ (դիադային), եռանդամ (տրիադային), քառանդամ (տետրադային) բաժանումների փոխարեն հանդես է գալիս վեցանդամ (հեքսադային) բաժանումը: Այս բաժանումը հենվում է միավորների հնարավոր հարաբերությունների վրա:

→ հիմնական եզր, որի դեպքում ուշադրության կենտրոնում է A-ն իր հարաբերությամբ դեպի B-ն՝ $A \rightarrow B$.

← հակադիր եզր, որի դեպքում ուշադրության կենտրոնում է B-ն իր հարաբերությամբ դեպի A-ն՝ $(A) \rightarrow B$. Եթե միասնության համար B-ն բերենք ձախ կողմը, ապա կունենանք $B \leftarrow (A)$.

→ միջին եզր, որ ենթադրում է $A \rightarrow C \rightarrow B$ կամ $B \leftarrow C \leftarrow A$ միջնորդված (եռանդամ) հարաբերություն, և որտեղ ուշադրության կենտրոնում է C-ն իր

հարաբերությամբ դեպի A-ն և B-ն ($n^{\prime}z-n^{\prime}z^{\prime}$ դիզյունկտիվ հարաբերություն)՝ $(A) \rightarrow C \rightarrow (B)$ կամ $(B) \leftarrow C \leftarrow (A)$ ։ միասնության համար ձախ կողմը բերելով C-ն (նրանից սկսելով հարաբերության նշանակումը), կունենանք $C \rightarrow$ (C-ի առումով որակական տարբերություն չկա $C \leftarrow$ կամ $C \rightarrow$ նշանակումների միջև)։ «Հակոբը կացնով ջարդել է փայտը» և «Փայտը կացնով ջարդվել է Հակոբի կողմից» նախադասությունների մեջ կացնով հարաբերյալը գտնվում է միևնույն հարաբերության մեջ և կատարում է միևնույն գործառույթը, այսինքն՝ կախման մեջ է գտնվում մեկից և կախման մեջ դնում մյուսին, այլև հանդես գալիս որպես պատճառի և հետևանքի միջին օղակ։

$\leftarrow \rightarrow$ փոխադարձ եզր, որի դեպքում ուշադրության կենտրոնում կարող են լինել հավասարապես և՛ A-ն, և՛ B-ն (և՛ — և՛ կոնյունկտիվ հարաբերություն)՝ $A \rightleftharpoons$ և $B \rightleftharpoons A$ կամ, \rightleftharpoons -ի միասնացմամբ, $A \leftarrow \rightarrow$ և $B \leftarrow \rightarrow$ ։

\supset անդրադարձ եզր, որի դեպքում մենք գործ ունենք միևնույն A-ի հետ, որ հարաբերվում է ինքն իրեն՝ $A \rightarrow (A)$ կամ $A \supset$ ։

○ շեղոք եզր, որ առնվում է անկախ տվյալ հարաբերությունից և փաստորեն ներկայացնում մնացած բոլոր եզրերի ժխտումը։ այս բանը հասկանալու համար բերենք բայական սեռի քերականական կարգի (կատեգորիայի) օրինակը։ այստեղ \rightarrow -ը կարտահայտի ներգործականություն, \leftarrow -ը՝ կրավորականություն, \rightarrow -ը՝ բուն միջնբոլորականություն, այսինքն՝ պատճառականություն որպես կրկնակի ներգործման առկայություն (ներգործության ենթարկվողի նաև որպես ներգործող հանդես գալը՝ «Հակոբը Գրիգորին նոր շորեր հագցրեց/հագցնել տվեց»։ հայերենի որոշ քերականներ Գրիգորին ձևը մեկնաբանում են որպես տրական, բայց անկախ այս մեկնաբանությունից այլ լեզուներում առկա է կրկնաներգործություն), $\leftarrow \rightarrow$ -ը՝ փոխադարձություն, \supset -ը՝ անդրադարձություն, ○-ը՝ շեղոքություն, այսինքն՝ տվյալ բայի կողմից ներգործման որևէ հարաբերություն շարտահայտելու։

Եզրերը մեկնաբանելիս մենք կատարեցինք տեղափոխման որոշ գործողություններ՝ ուշադրության կենտրոնում գտնվող հարաբերյալները բերելով դեպի ձախ՝ $B \leftarrow$, $C \rightarrow$ (կամ, որ նույնն է, $C \leftarrow$)։ Այժմ նույնպես միասնության նկատառումով մենք կարող ենք B-ն և C-ն փոխարինել A-ով՝ նկատի ունենալով, որ A-ն կարող է ուրիշ հարաբերյալների հետ գտնվել նույն տիպի հարաբերությունների մեջ, ինչ B-ն և C-ն։ Այս դեպքում մենք կունենանք $A \rightarrow$ (A-ն գտնվում է \rightarrow հարաբերության մեջ մի ուրիշի հետ), $A \leftarrow$ (A-ն գտնվում է \leftarrow հարաբերության մեջ մի ուրիշի հետ), $A \rightarrow$ (A-ն գտնվում է \rightarrow հարաբերության մեջ երկու ուրիշի հետ որպես դրանք կապող օղակ), $A \leftarrow \rightarrow$ (A-ն գտնվում է $\leftarrow \rightarrow$ հարաբերության մեջ մի ուրիշի հետ), $A \supset$ (A-ն գտնվում է \rightarrow և \leftarrow հարաբերության մեջ ինքն իր հետ) և A_0 կամ, որ նույնն է, պարզապես A (A-ին հատուկ չէ տվյալ հնարավոր հարաբերություններից ոչ մեկը)։

Այսպիսով, եզրերը ոչ այլ ինչ են, եթե ոչ հարաբերիչներ ըստ միանգամ (տրամաբանության մեջ ընդունված տերմինով՝ միատեղ), երկանգամ (երկտեղ), եռանգամ (եռատեղ) հարաբերյալների (հարաբերվող կողմերի)։ Այդ հարաբերիչները առանձին առնված հարաբերյալի հետ հանդես են գալիս որպես հատկանիշներ կամ բնութագրիչներ։

Առանձնացված յուրաքանչյուր կարգի (կատեգորիայի) համար տարբերելով 6-ական եզր և դրանց տալով արդեն բերված որոշ առումով պայմանական բնութի, անվանումները՝ կունենանք հոգեկան-նշանային կարգերի (կատեգորիաների) և նրանց եզրերի ստորև բերվող բաշխումը։

1. Իմացություն (ընկալում)

Իմացության հակադրվող եզրերը նշանը և առարկան են: Այն հարցը, թե սրանցից ո՞րը պետք է համարել հիմնականը, լուծվում է տարբեր կերպքանի որ իմացությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ որևէ բանի իմացում, կարծեք թե բնական է սկսել հենց այդ «որևէ բանից», այսինքն՝ առարկայից (օբյեկտից): Սակայն նախ՝ եթե նպատակը հոգեկան երևույթների նկարագրությունն է, բնականաբար պետք է հիմք ընդունվի նվազագույն միավորը՝ տվյալ դեպքում նշանը, որը համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ այս դեպքում առնվում է անկախ այն գործածողից և ընդունողից՝ միայն առարկայի հետ ունեցած հարաբերությամբ, որպես առարկայի (նշանակվողի) տեղակայող (փոխարինիչ): այս առումով «նշանային» ասելով հասկացվում է «հոգեկան»: Երկրորդ՝ «առարկա» ասելով չի կարելի հասկանալ միայն գոյակ՝ ո՞նալ գոյություն ունեցող նյութական առարկա (թեև «առարկա» բառը հաճախ գործածվում է այդ նեղ առումով): նշանի առարկա կարող են լինել նաև ոչ-իրականը (երևակայականը, գերբնականը) և հոգեկանը, ուստի և առարկայից դեպի նշանը գնալը միշտ էլ չի կարելի դիտել որպես ուղիղ ճանապարհ. այդ երկու եզրը կապված են անցումներով. ահա այս է պատճառը, որ Ֆ. Բրենտանոն և է. Հուսեռը սկսում են հոգեկանից, հոգեկան երևույթներից՝ խոսելով մտքի («գիտակցության») ուղղվածության՝ ինտենցիոնալ բնույթի մասին: Երրորդ՝ «առարկա» (objectum «առջև ընկած (բան)») բառը առնվում է հենց որպես մտքի (իմա՛ նշանի) առարկա, այսինքն՝ չի կարող առնվել առանց նշանի հետ ունեցած հարաբերության, նշանն էլ դիտվում է որպես առարկայական բովանդակության կրող: Չորրորդ՝ նշանների ամբողջությունը կրողի և առարկաների ամբողջության փոխհարաբերությունը վերջին հաշվով համակարգի և միջավայրի փոխհարաբերությունն է. այս դեպքում էլ, բնականաբար, ուշադրության կենտրոնում քննվող համակարգն է, որ հանդես է գալիս համակարգը կրողի ուղեղում, և քննությունն էլ սկսվում է նրանից: Հարկ ենք համարում նշել, որ որոշ լեզվաբանների կողմից «առարկա» և «օբյեկտ» տերմինները տարբերակելու փորձը տվյալ դեպքում ավելի շատ լեզվական է, քան բուն բովանդակային:

Այսպիսով, մենք կունենանք իմացության կարգի (կատեգորիայի) հետևյալ դրսևորումները.

→ նշան. իմա՛ նշան, որ առնվում է առարկայի հետ ունեցած հարաբերությամբ՝ «նշան→(առարկա)».

← առարկա. իմա՛ առարկա, որ առնվում է նշանի հետ ունեցած հարաբերությամբ՝ «(նշան)→առարկա» կամ, եթե առարկան բերվի առաջին տեղը և հիշը շրջվի, «առարկա←(նշան)».

→ զգայություն, իմա՛ այն, ինչ կապում է առարկան նշանի հետ որպես կապող օղակ՝ «(առարկա)→զգայություն→(նշան)» կամ, միջին եզրը բերելով առաջին տեղը և միացնելով երկու սլաքները, «զգայություն → (A, B)».

↔ նշան-առարկա. իմա՛ միավորը հանդես է գալիս միաժամանակ և՛ որպես նշան, և՛ որպես առարկա, այսինքն՝ առկա է «առարկա↔նշան» կամ «առարկա ← → նշան» փոխհարաբերությունը.

⇒ ինքնանշան. իմա՛ առարկան հանդես է գալիս որպես ինքն իր նշան.

○ անառարկայականություն, այսինքն՝ նշանի անհարաբերականություն, նշանն առնվում է առարկայից անկախ:

3 F. Brentano, Psychologie vom empirischen Standpunkt, Leipzig, 1874, E. Husserl, Logische Untersuchungen, 2, Halle, 1901.

2. Գիտակցություն

«Գիտակցություն» անվանումը որոշ առումով պայմանական է. այն տրվել է ղեկավարում նշանակում է նշանների փոխկախումների ամբողջությունը: Եթե մենք նշան ասելով հասկանում ենք առաջին հերթին հասկացությունները, ապա պարզ կլինի, որ գիտակցությունը հասկացությունների ամբողջություն է, յուրատեսակ համակարգ, սրի ամեն մի անդամ որոշվում է մյուսների հետ ունեցած ընդհանուր հարաբերություններով, մասնավորապես կախման հարաբերություններով: Պատահական չէ, որ «գիտակցություն» բառը (հմմտ. ռուս. сознание, անգլ. consciousness) կազմված է -կից- բաղադրիչով, որ համապատասխանում է ռուսերենի со-, անգլ. con- (հմմտ. լատ. con-) նախածանցներին և ցույց է տալիս գիտելիքների ամբողջությունը, այսինքն՝ անմիջական և միջնորդված իմացության արդյունքների՝ հասկացությունների, ներքին կապն ու փոխհարաբերությունը: Գիտակցվում է (հասկացվում է) այն, ինչ կապի մեջ է գրվում գիտակցվածի (հասկացվածի, հասկացության) հետ: Գիտակցությունը հենվում է նշանային կախումների, մտածողությունը՝ նշանային պատճառականությունների վրա: Այն, ինչ կախման մեջ չի գրվում այլ հասկացություններից, չի գիտակցվում, մնում է որպես ենթագիտակցություն, որը գիտակցության հետ միասին տալիս է հոգեկան ներաշխարհը:

Եթե գիտակցությունը փորձենք հարաբերության մեջ դնել նշանագիտության (սեմիոտիկայի) բաժինների ուսումնասիրության առարկաների հետ⁴, ապա իմացությունը կհարաբերակցվի մտտավորապես սեմանտիկայի (նշանի և նշանակվողի հարաբերությունը), գիտակցությունը՝ սինտակտիկայի (նշանների փոխհարաբերությունը) ուսումնասիրության առարկաներին (օբյեկտներին):

Գիտակցության տարրերը կազմող նշանների (հասկացությունների) կախումնային հարաբերությունները ընկած են հոգեբանության, տրամաբանության, լեզվաբանության (քերականության) մեջ ուսումնասիրվող ստորադասական զանազան հարաբերությունների հիմքում. հոգեբանության մեջ քննվող զուգորդային (ասոցիատիվ) կապերը, հոգեբանական և տրամաբանական դատողության անդամների (ենթակայի և ստորոգյալի), լեզվաբանության մեջ թեմայի և ռեմայի, ենթակայի և ստորոգյալի, որոշչի և որոշյալի, խնդրի և խնդրառուի հարաբերության հիմքում ընկած են ստորև քննվող նշանային կախումների եղբրը: նշանային կախումները որպես գիտակցության տարրեր հանդես են գալիս հետևյալ եղբրի ձևով.

→ հիմնանշան (գլխավոր, գերադաս, առաջնային նշան) որպես «A նշան → B նշան» հարաբերության առաջին եզր՝ «(A նշան → (B նշան))».

← ենթանշան (կախյալ, ստորադաս, երկրորդային նշան) որպես «A նշան → B նշան» հարաբերության երկրորդ եզր՝ «(A նշան) → B նշան» կամ, տեղաշրջումով, «B նշան ← (A նշան))».

→ միջանշան (միջակա, հարաբերիչ, կապող, կոպուլատիվ նշան) որպես «A նշան → C նշան → B նշան» հարաբերության միջին եզր՝ «(A նշան) → C նշան → (B նշան))» կամ, A ու B նշանների միացումով և C նշանի առաջբերումով, «C նշան → (A նշան, B նշան))».

←→ փոխանշան (փոխադարձ նշան) որպես «A նշան ↔ B նշան» և «B նշան ↔ A նշան» հարաբերության A կամ B անդամի ընդհանուր նշանակում՝ $A \leftrightarrow B$, $B \leftrightarrow A$, այլև $A \leftrightarrow B$, $B \leftrightarrow A$.

⁴ Տե՛ս Քառուկայես Ch. Morris, Foundations of the theory of signs, Chicago, 1938. Signs, language and behavior, New York, 1946.

3. Լ Ե Ղ Ո Ւ

(արտահայտություն)

Ինչպես որ օրգանիզմի, այդ թվում նաև մարդկային օրգանիզմի, կենսազործունեությունը հանդես է գալիս միջավայրի հետ հաստատվող փոխադարձ կապի որոշակի միջոցներով, որոնք ապահովում են նյութափոխանակությունը՝ նյութերի մուտքը, մշակումը և ելքը, այնպես էլ հոգեկան գործունեությունը՝ հանդես է գալիս որպես տեղեկատվության (ինֆորմացիայի) մուտք, մշակում և ելք, որոնք համապատասխանաբար հանդես են գալիս որպես իմացություն, գիտակցություն և արտահայտություն:

Ներքին գործընթացների ամեն մի դրսևորում գիտելով որպես արտահայտություն և այս անվան տակ նկատի ունենալով բոլոր ընկալելի միջոցները, լինեն դրանք տեսանելի թե լսելի, մարդկային լեզուն կարելի է սահմանել որպես արտահայտության այն ընկալելի միջոցների ամբողջությունը, որոնք բնորոշ են հատկապես մարդու համար: Այս բմբռնմամբ մարդկային լեզվի ծագման հարցը կորցնում է իր սրությունը. եթե արտահայտությունը հոգեկան գործունեության անխուսափելի մասն է, ապա մարդկային լեզուն, որպես արտահայտության ընդհանուր համակարգի դարգացած օղակը, գիտվում է այդ ընդհանուր կապի մեջ, և նրա ծագման հարցը դառնում է այն, թե ներքին երևույթների դրսևորման հատկապես ի՛նչ և ինչպիսի՛ միջոցներ են մտանալովով մարդու համար, ստացել մարդկային արժեք որպես մարդկային լեզվի միջոցների, և հատկապես ինչպե՛ս է տեղի ունեցել արտահայտվող (արտահայտելի) երևույթների և դրանց արտահայտման միջոցների անցումը բնականից սրայմանականի:

Ինչպես որ գիտակցությանը որպես վիճակի համապատասխանում է մտածողությունը որպես գործընթաց, այնպես էլ լեզվին որպես վիճակի համապատասխանում է հաղորդակցությունը (ըստ Սոսյուրի՝ խոսքը, որ, սակայն, հաղորդակցման մի դրսևորումն է) որպես գործընթաց: Գիտակցությունը և լեզուն մտածողության և հաղորդակցության նախադրյալներն են և արդյունքը: Նրանց փոխհարաբերությունը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայով՝

գիտակցություն ← → լեզու

↑ ↓
մտածողություն ← → հաղորդակցություն («խոսք»)

Անցնելով լեզվի կարգի (կատեգորիայի) եզրերի քննությանը՝ մենք կունենանք հետևյալ պատկերը.

→ արտահայտելի որպես «արտահայտելի (արտահայտվող) → արտահայտիչ» հարաբերության առաջին եզր՝ «արտահայտելի → (արտահայտիչ)». հարկ ենք համարում այս կապակցությամբ նշել հետևյալը. առաջին՝ կարելի է գործածել սոսյուրյան «նշանակելի» և «նշանակիչ» տերմինները, եթե դրանք առնենք անկախ ընկալողից, այսինքն՝ քննենք միայն ներքինի և տրտաքինի հարաբերությամբ, վերանանք արտահայտության նպատակադրվածությունից. երկրորդ. «արտահայտություն» բառի մեր գործածությունը տարբեր է ելմսյլե-

յան «արտահայտության պլան»⁵ կապակցության գործածությունից. մեզ համար արտահայտությունը որոշ բովանդակության կրող է, այսինքն՝ ելմսլեյան «արտահայտության պլանը» համապատասխանում է մեր «արտահայտիչին», **եթե** նրան տանք «արտահայտիչների հավաքական ամբողջություն» իմաստը. երրորդ՝ «արտահայտելի» և «արտահայտիչ» բառերը հավասարաթեք են «իմաստ» և «(արտահայտման) ձև» իմաստներին, բայց «ձև» բառն առնվում է սուբստանցիոնալ և ոչ ելմսլեյան ձևի առումով, այսինքն՝ նրա տակ հասկացվում են բոլոր կարգի ընկալելի նշանակիչները՝ հնչյունները, գրերը, շարժումները.

← արտահայտիչ որպես «արտահայտելի → արտահայտիչ» հարաբերության երկրորդ եզր՝ «(արտահայտելի) → արտահայտիչ» կամ, համապատասխան տեղափոխությամբ, «արտահայտիչ ← (արտահայտելի)».

→ միջարտահայտություն (նեքքին ձև), որ կապում է արտահայտելին արտահայտիչի հետ՝ «(արտահայտելի) → միջարտահայտություն → (արտահայտիչ)» հարաբերության միջին եզր՝ → միջարտահայտություն → կամ միջարտահայտություն →.

← → արտահայտություն որպես արտահայտելի և արտահայտիչի միասնություն «արտահայտելի ≍ արտահայտիչ» հարաբերության եզրերից յուրաքանչյուրի հավասար դրսևորում. ամեն մի երկկողմ միավոր (ձևույթ, բառ, նախադասություն...) հանդես է գալիս որպես արտահայտություն.

⇒ ինքնարտահայտություն որպես իր համար արտահայտիչ ծառայող արտահայտելի՝ անդրլեզվի (մետալեզվի) տարր.

○ շարտահայտվածություն (իմպլիցիտություն) ի հակադրություն արտահայտվածության (էքսպլիցիտության):

4. Եղանակավորություն

Եղանակավորության անվան տակ հասկացվում է խոսողի վերաբերմունքը դեպի իրականությունը, հաղորդման բովանդակության և իրականության փոխհարաբերության նրա գնահատումը: Եղանակավորությունը արտահայտվում է բայի եղանակով, եղանակավորող բառերով (այդ թվում՝ եղանակային բայերով), հնչերանգով և այլն: Եղանակավորության ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն լեզվաբանության, այլև տրամաբանության համար, որտեղ գոյություն ունի հատուկ բնագավառ՝ եղանակային տրամաբանությունը: Վերջինիս ուսումնասիրության առարկան հավանականության տարբեր աստիճանների գնահատումն է, բայց ոմանք ընդլայնում են քննության բնագավառը՝ ընդգրկելով ճշգրտության տարբեր աստիճանների դրսևորումները՝ ևս:

Համընդհանուր լեզվաբանական կաղապարի մեջ եղանակավորությունը դիտվում է որպես իմացության (ընկալման) գործընթացային նմանակը՝ պատճառականության դրսևորումներից մեկը: Եթե իմացության եզրերը առնվում են որոշակի վիճակում՝ որպես նշանի և նշանակվող առարկայի տարատեսակային կախումներ, ապա եղանակավորության մեջ դրանք դիտվում են պատճառական հարաբերության մեջ, որպես գործընթացներ, նշանի և նշանակվող առարկայի փոխազդեցության դրսևորումներ:

→ կամք որպես հոգեկանի (նշանայինի) և իրականի պատճառական այնպիսի հարաբերություն, որի դեպքում նշանայինը ուղղված է իրականությանը որպես պատճառը հետևանքին, այլ կերպ ասած՝ առնվում է «նշանային պատ-

⁵ А. Ельмслев. Прологомены в теории языка.—«Новое в лингвистике», I, Москва, 1960.

ճառ → իրական հետևանք» հարաբերության առաջին եզրը «նշան-պատճառ → (իրական հետևանք)» ձևով. այն սովորաբար արտահայտվում է ըղձական եղանակի, ուզե՛նալ, կա՛մե՛նալ, ցանկանալ բայերի միջոցով. եթե եղանակավորության այս եզրը միանում է ուղղության կարգի հիմնական եզրի (→) հետ, այսինքն՝ ուղղվում է ինչ-որ գոյակի (հատկապես անձի), այն հանդես է գալիս որպես հրամայական եղանակ (modus comparativus).

← զգացմունք որպես «իրական պատճառ → հոգեկան (նշանային) հետեւվանք» հարաբերության երկրորդ եզր, որ համապատասխան տեղափոխումով կարելի է ներկայացնել որպես «հոգեկան (նշանային) հետևանք ← (իրական պատճառ)» ձևով. պատահական չէ, որ հուն. πᾶσις բառի պատճենում ներկայացնող կիրք բառը նշանակում է «կրելը, կրում» ի հակադրություն ներգործության (հմմտ. նաև լատ. passio «կիրք, կրավորականություն»). զգացմունքի կամ «կրքերի» տարբեր տիպերը ներկայացնում են եղանակավորության ← եզրի զուգորդումները այլ կարգերի եզրերի հետ. ձայնարկությունների և վերաբերականների (եղանակավորող բառերի) միջոցով արտահայտվող տեսակների դասակարգումը տրված է մեր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքում⁶.

→ անհրաժեշտություն որպես արտաքին կամ ներքին «իրական պատճառ → նշանային հետևանք → իրանշանային պատճառ» հարաբերության միջին օղակ, որ հետևանք է իրական կամ նշանային ներգործության («ստիպման») և իր հերթին պատճառ է դառնում իրական կամ նշանային պատճառի. «Ծս պիտի գնամ» կամ «Ինձ հարկավոր է գնալ» նախադասությունները նշանակում են՝ «ինչ-որ բան ներգործում է ինձ վրա՝ գնալու գործողություն առաջ բերելու համար». եղանակավորության կարգի այս եզրը արտահայտվում է հատկապես բայի եղանակային ձևերով, պետք է, հարկավոր է, անհրաժեշտ է միադիմի արտահայտություններով.

← → ննարավորություն, որ հանդես է գալիս որպես իրական և նշանային փոխհարաբերության դրսևորում՝ «իրական պատճառ → հոգեկան հետեւվանք» և «հոգեկան պատճառ → իրական հետևանք» հարաբերությունների զուգակցում:

⇒ ինքնազգացում որպես ներքին իրական պատճառի ներքին հետևանքի դրսևորում:

○ անտարբերություն (ապաթիա) որպես քանակի և հոգեկանի պատճառահետևանքային կապի նկատմամբ շեղություն:

5. Մտածողություն

Մտածողությունը, ինչպես տեսանք, ՀԼԿ-ում դիտվում է որպես գիտակցության գործընթացային նմանակը, որ հենվում է պատճառային կապերի վրա, և որի դեպքում հարաբերվող եղրերից յուրաքանչյուրը նշանային բնույթ ունի: Այստեղ «մտածողություն» տերմինն առնվում է որպես գործընթաց, որի դեպքում նշանների հարաբերությունները հիմք են տալիս նշանային նոր հարաբերությունների ձևավորման համար: Եթե գիտակցության դեպքում մենք գործ ունենք նշան-հասկացությունների կախումնային կապերի կամ հարաբերությունների հետ, ապա մտածողության մեջ առկա են հարաբերությունների հարաբերություններ, որոնցից մեկը հիմք է հանդիսանում մյուսի համար, այլ կերպ ասած՝ գիտակցության մեջ առկա են RrR տիպի հարաբերու-

⁶ Պ. Բ. Ջաֆուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 369, 385—387:

թյուններ, որտեղ R-ը նշանային բնույթ ունի, իսկ r-ը արտահայտում է նրանց կախման բնույթը, ապա մտածողությունը բնութագրվում է RrRQrR տիպի կախմամբ, որտեղ Q-ն արտահայտում է երկու հարաբերությունների միջև եղած հարաբերությունը որպես պատճառական կախում (մի հարաբերության կախումը մյուսից): Եթե գիտակցության մեջ հարաբերվող եզրերը նշաններ են, ապա մտածողության մեջ դրանք հանդես են գալիս որպես նշանների կախումներ, այսինքն՝ առաջին դեպքում հարաբերվող նշանները (հարաբերչալները) գերազանցապես հասկացություններ և պատկերացումներ են, հարաբերությունները՝ գերազանցապես դատողություններ (լայն առումով), երկրորդ դեպքում հարաբերվող բարդ նշանները որպես դատողություններ (լայն առումով) կապի մեջ են մտնում որպես յուրատեսակ մտահանգումներ: Քանի որ՝ 1) ամեն մի հասկացություն որպես դատողության եզր կարող է ներկայացվել Rr(R) ձևով, այսինքն՝ դատողության, էությունը կարող է ներկայացվել դատողության հիման վրա, 2) ամեն մի դատողություն կարող է ներկայացվել RrRQ(RrR) ձևով, այսինքն՝ դատողության էությունը կարող է ներկայացվել մտահանգման հիման վրա, 3) հասկացության և դատողության, մտահանգման և դատողության միջև առկա են, ըստ վերևում ասվածի, անցման և փոխադարձելիության հարաբերություններ, սվյալ դեպքում հատկապես RrR ← · RrRQrR հարաբերությունը, ուստի կարելի է ասել, որ գիտակցության և մտածողության բազադրիչները կապված են փոխադարձ անցումներով. գիտակցության ոլորտի կախումները մտածողության ոլորտում մտնում են պատճառական կախումների մեջ և մտածողության ոլորտում տեղ գտած կախումները վերջին հաշվով հանդես են գալիս գիտակցության ոլորտում: Այսպիսով, գիտակցությունը մտածողության արդյունքն է և նախապայմանը, մտածողությունը գիտակցության հիմքը և գործընթացային նախադրյալը:

Մտածողության կարգի (կատեգորիայի) ելքերը հանդես են գալիս հետևյալ ձևով.

→ պայման (նախադրյալ) որպես «պայման → եզրակացություն» հարաբերության առաջին եզր՝ «պայման → (եզրակացություն)», այսինքն՝ նշանային պատճառ նշանային հետևանքի համար. մտածողության մեջ բնորոշվում է այն հնարավոր պատճառը, որ կարող է հանդեսնել սվյալ հնարավոր արդյունքին. այս հարաբերությունը հասկանալու համար բերենք իրական պատճառի վրա հիմնված մի նախադասություն ենթադրական պատճառի վրա հիմնված նախադասության զուգահերթությամբ. «Քանի որ իմ բարեկամը վերադարձավ գյուղ, ես այլևս քաղաք չեմ գնա» և «Եթե իմ բարեկամը վերադառնա գյուղ, ես այլևս քաղաք չեմ գնա»:

← եզրակացություն որպես «պայման → եզրակացություն» հարաբերության երկրորդ եզր՝ «(պայման) → եզրակացություն» կամ, տեղաշրջմամբ, «եզրակացություն ← (պայման)».

→ միջապայման («փոքր նախադրյալ») որպես «պայման → միջապայման (եզրակացություն-պայման) → եզրակացություն» հարաբերության միջին օղակ՝ → միջապայման → կամ միջապայման ←.

← → ենթադրություն որպես որոշակի «նշանային պատճառ ⇌ նշանային հետևանք» հարաբերության փոխզուգակցություն, այսինքն՝ որպես յուրատեսակ նախնական պայման—եզրակացություն.

⇒ նպատակ որպես նշանային հետևանք, որ կարող է դառնալ միաժամանակ պատճառ գործողության համար. ոմանք նպատակը դնում են եզրակալվորության մեջ, բայց այն իրականում մտածողական ակտ է, որ սո-


վորաբար զուգակցվում է կամային ուղղվածության հետ, ուստի և վերջինս թվում է առաջնային և մղվում է առաջին պլանը:

○ հիշողություն որպես մտածողության տարր՝ առնված անկախ մտածողական ակտիվությունից:


6. Հաղորդակցություն

Ինչպես նշվել է, սոսյուրյան «լեզու—խոսք» հակադրությունը համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ փոխարինվում է «լեզու—հաղորդակցություն» հակադրությամբ: Հաղորդակցություն անվան տակ հասկացվում է լեզվավիճակի իրականացման երևույթների ամբողջությունը, մինչդեռ խոսքը նույն ընդհանրությունը շունի. եթե հարցը, պատասխանը, երկխոսությունը կարելի է քննել որպես հաղորդակցման տարրեր դրսևորումներ, ապա նույն հաջողությամբ դրանք չի կարելի դիտել որպես խոսքի իրականացումներ: Ինքը Սոսյուրը լեզուն համարելով հասարակական և խոսքը անհատական երևույթ, վերջինիս էությունը բացատրելու համար փաստորեն դիմում է հաղորդակցման ակտին, ցույց տալիս, թե ի՞նչ է տեղի ունենում խոսողի ուղեղում և ի՞նչ լսողի ուղեղում?: Մինչդեռ «խոսք» բառի մեջ նկատի է առնվում միայն խոսելը, բայց ոչ լսելը: Լեզվի գործընթացային իրացումը զուտ անհատական ակտ չէ, այլ առաջին հերթին երկկողմանի ակտ. լեզվի և խոսքի հակադրությունը որպես «մաքուր» հասարակականի և «մաքուր» անհատականի անհասկանալի է դարձնում դրանց կապը, մի բան, որ ակնառու է դառնում լեզվի և հաղորդակցության կարգերի (կատեգորիաների) հակադրության դեպքում. խոսքն ինքը չի կարող դիտվել որպես համապարփակ կարգ (կատեգորիա), որպես լեզվի իրականացման համապարփակ դրսևորում. այստեղ մասնավորվում է հաղորդակցման ակտը և նրա մի դրսևորումը դիտվում որպես ամբողջի նշանակում: Հաշվի չի առնվում, որ մի կողմից՝ լեզվի իրականացումը կարող է հասարակական արժեք ունենալ, մյուս կողմից՝ լեզուն կարող է հանդես գալ ոչ միայն որպես հասարակական, այլև որպես անհատական երևույթ. լեզու ունի ոչ միայն ողջ հասարակական կոլեկտիվը, այլև նրա մի մասը կազմող անհատը. գոյություն ունի ոչ միայն հայոց լեզու, այլև Թումանյանի լեզու, Իսահակյանի լեզու և ընդհանրապես տվյալ ժողովրդի լեզուն կազմող ամեն մի անհատի լեզու: Այսպիսով ոչ միայն հարկավոր է տարբերակել հասարակության լեզուն և անհատի լեզուն, այլև խոսքի հասարակական և անհատական կողմերը:

Սոսյուրյան



սխեմայի փոխարեն փաստորեն հանդես է գալիս



սխեման:

Փ. Դ. Соссюр. Труды по языкознанию. Москва, 1974, էջ 46 և 52:

Այս կապակցությամբ նշենք, որ վերջին շրջանում ֆրանսիական լեզվաբանության մեջ հակում կա «langue—parole» հակադրության երկրորդ անդամի փոխարեն գործածել discours բառը և ստանալ «langue—discours» հակադրությունը, որով խոսքին հատկացվում է փոքր-ինչ ավելի ընդարձակ բնույթ, և այն մոտեցվում է տեքստին: Նշենք նաև, որ Ն. Զոմսկու «competence—performanee» («ունակություն (կարողություն)—կատարում») հակադրությունն ավելի շեղոք է և բուն լեզվականը ներկայացնում է ավելի ընդհանուր մեկնաբանությամբ՝ առանց էական նորություն բերելու. լեզվի և խոսքի հնարավորության և իրականության ընդհանուր կարգերի լեզվական դրսևերումներ լինելու դրույթը վաղուց է հայտնի:

Հաղորդակցության եզրերը բաշխվում են հետևյալ կերպ.

→ դրդախոսք որպես «դրդախոսք → պատասխան խոսք» հարաբերության առաջին եզր՝ «դրդախոսք → (պատասխան խոսք)». դրդախոսքի ամենից ավելի որոշակի տիպը հարցն է, որի դեպքում, սակայն, առկա են լրացուցիչ եզրեր, մասնավորապես իմացության կարգի շեղոք եզրը (նշանի անառակայություն) և եղանակայնության կարգի հիմնական եզրը (ձգտում, ցանկություն, այսինքն՝ իմացության ձգտում). վերջիվերջո կարելի է ասել, որ այստեղ առկա է վարմունքային (բիհևիորիստական) հոգեբանության «ստիմուլ → ռեակցիա» հարաբերության լեզվական դրսևորումը և. Բլումֆիլդի մեկնաբանությամբ⁸:

← պատասխան-խոսք՝ որպես դրդախոսքի նկատմամբ ռեակցիա՝ պատասխան-խոսք ← (դրդախոսք) դրսևորմամբ.

→ խոսք որպես միջին օղակ դրդախոսքի և պատասխան-խոսքի միջև (ո՛չ դրդախոսք—ո՛չ պատասխան~խոսք).

←→ երկխոսություն (դիալոգ) որպես դրդախոսքի և պատասխան-խոսքի համատեղում՝ գրույց և, մասնավորմամբ, հարցուպատասխան.

⇒ մենախոսություն որպես ինքնախոսություն՝ ինքն իրեն ուղղված խոսք.

○ արտահայտվածք (ասվածք) որպես ոչ մեկին հատկապես շուղված խոսք՝ արտահայտություն առանց ընկալման հատուկ ակնկալիքի. սրա մի դրսևորումն է բացականչությունը, որը, սակայն, ունի նաև եղանակավորության կարգի հիմնական կամ հակադիր եզրերից մեկը՝ ցանկություն (→) կամ զգացմունք (←):

Г. Б. ДЖАУКЯН—Лингвистическое моделирование духовных явлений.—Говоря о языковом выражении духовных явлений, под последними следует подразумевать как объективное содержание слов и предложений, относящихся к духовному миру, так и субъективное отношение говорящего к выраженному содержанию. В обоих случаях мы имеем дело с некоторыми духовными категориями и их терминами, средства выражения которых неодинаково распределяются в разных языках и в разных структурных компонентах одного и того же языка.

Универсальная лингвистическая модель (УЛМ), построенная автором статьи, дает возможность описывать в числе других также и духовные явления. Если различать общие и духовные категории, то можно сказать, что в основе последних лежат две общие категории: субстантивная категория зависимости, характеризующая некоторые отношения предметов как состояния, и атрибутивная категория причинности, характеризующая отношения этих отношений как процессы.

⁸ Л. Блумфилд. Язык, Москва, 1968, էջ 37 և հշ.:

Предполагается, что зависимостные отношения состояний не что иное, как причинностные отношения.

Если элементы духовных явлений характеризовать как знаки, подразумевая под ними духовные сущности—заменители объектов (независимо от их восприятия другими), то возможно различать три духовных аналога зависимости и три духовных аналога причинности по отношениям 1) объект—знак, 2) знак—знак и 3) знак—выразитель. Таким образом, имея в виду, в частности, духовный мир человека, на базе зависимости следует выделить: 1) познание, 2) сознание и 3) язык, а на базе причинности—4) модальность, 5) мышление и 6) коммуникацию. В каждой из этих категорий выделяются неделимые элементы (типы отношения)—термы по следующим шести возможным проявлениям: 1) основной терм: \rightarrow , 2) противоположный терм: \leftarrow 3) средний терм: $\rightarrow\leftarrow$ (отношение дизъюнкции: **ни-ни**), 4) совместительный терм: \leftrightarrow (отношение конъюнкции: **и-и**), 5) рефлексивный терм: \Rightarrow (отношение самого к себе) и 6) нейтральный терм: \circ (нейтральность к отношениям, обозначаемым данной категорией).